ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Այսօր, այո փառք ենք տալիս բարձրյալն Աստուծո, որ վերստին բերում է մեզ բոլորիս և համայն մարդկությանը, մեծ ավետիսը մանուկ Հիսուսի հրաշք Ծննդյան ի մխիթարություն մեր հուսացյալ հոգիների: Մանավանդ մեր Սուրբ Եկեղեցին ու հավատավոր ժողովուրդը մեր, որ ապրում է իր դարավոր պատմության ամենատագնապալի պահերից մեկը իր Մայր Երկրում, հայացքը դեպի երկինք հառած, օգնություն է հայցում Աստվածորդուց, որն աշխարհ եկավ որպես փրկիչ ազգի մարդկան: Ահա մեր հույսը և մեր ուրախությունը այս օրերին, որով դիմավորում ենք այս տարի ավետիսը լուսաշող Սուրբ Ծննդյան:

Թող մեր Փրկչին Քրիստոսի կենարար շնորհները առատապես բաշխվեն Ձերդ Սրբության, Ձեր Սուրբ Աթոռին, ուխտապահ հոգևոր դասին, վարչական մարմինների հարգարժան անդամներին ու համայն Մեր հավատացյալ զավակներին:

Ամենայն բարիք, սեր և խաղաղություն եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ, ամեն:

Շնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ:

Եղբայրական սիրով՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով լեցուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ

մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: